ԱԼԻԿ ՂԱՐԻԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓԱՐԻԶԻ ՎԵՀԱԺՈՂՈՎՈՒՄ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑԸ

1919թ հունվարից գումարված Փարիզի խաղաղության վեհաժողովում, որը պետք է քննարկեր և սահմաներ պատերազմից հետո աշխարհաքաղաքական նոր կարգերը, տերությունների միջև ի հայտ են գալիս մեծ, վաղուց առկա հակասությունները և ստեղծում յուրօրինակ սրվածություն: Գերտերությունների հակասությունների այս հորձանուտում պետք է վճռվեր նաև Հայաստանի հարցը: Ակնկալվում էր, թե երկարատև զրկանքներից և համաշխարհային պատերազմի հարուցած բազմաթիվ աղետներից հետո Հայկական հարցը պիտի ստանար արդարացի հանգուցալուծում: Խորհրդաժողովի աշխատանքները նաև պետք է վճռեին Հայաստանի սահմանների հարցը: Ցավով պետք է արձանագրել, որ հայ ժողովրդի շահերը պաշտպանող երկու պատվիրակությունները (Հայաստանի Հանրապետության կողմից՝ Ավետիս Ահարոնյան, արևմտահայերի կողմից՝ Պողոս Նուբար փաշա) մինչև վերջ չկարողացան համաձայնության գալ հետապնդվող նպատակների շուրջ:

Հենց սկզբից հակասությունները սրվեցին պատերազմի արդյունքում չափից դուրս ուժեղացած բրիտանացիների և նոր հզորացող ԱՄՆ-ի միջև մի կողմից, Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև՝ մյուս կողմից, ապա նաև՝ Բրիտանիայի և Իտալիայի միջև: Բրիտանացիները ռուսական կայսրության փլուզումից հետո ձգտում էին թույլ չտալ Ֆրանսիայի հզորացումը և փորձում էին հակակշռել այն ամերիկացիների միջոցով: 1919թ մայիսի 14-ին վեհաժողովի Չորսի խորհուրդը որոշում է Հայաստանի և Թուրքիայի մանդատն առաջարկել ԱՄՆ-ին: Հետագայում քննարկվում են նաև Հայաստանի մանդատը Իտալիային, ապա նույնիսկ՝ Հունաստանին հանձնելու տարբերակները:

Հայաստանի խնդիրը վիճարկվում էր բազմաթիվ մակարդակներում, սակայն որևէ հստակ որոշում չէր կայացվում: Միակ պարզորոշությունն այն էր, որ Դաշնակից և միավորված տերությունները համաձայնվեցին Հայաստանը Թուրքիայից ամբողջովին առանձնացվելու հարցում[1]:

[1] Տես Գ.Գ.Махмурян, Лига наций, Армянский вопрос и Республика Армения, Ереван, 1999, էջ 54:

Հայաստանի վրա ամերիկյան մանդատի տարածումը շրջանառության մեջ էր մտնելու այն պարագայում, երբ ԱՄՆ-ի Սենատը համաձայնություն տար մանդատային տարածքներ վերցնելու առաջարկին: Քննարկվող տարբերակներից Հայաստանի համար ամենաշահավետը և իրատեսականը ամերիկյանն էր: ԱՄՆ-ը շահագրգռված էր Հայաստանի սահմանների առավելագույն արդյունավետությամբ և պնդում էր, որ «Հայաստանի սահմանները պետք է որոշվեն այն հաշվարկով, որ բավարարվեն հայերի բոլոր օրինական պահանջները, և ապահովվի դեպի ծով հայերի ազատ և հուսալի ելքը»[2]:

Ամերիկյան քաղաքականությունն անվերապահորեն բախվում էր բրիտանական շահերի հետ: Մանդատի ընդունման դեպքում Հայաստանի ամերիկյան մանդատի արժեքը գնահատվում էր 757 մլն դոլար 5 տարվա համար, որից հետո այն ինքնաբավ պետք է դառնար: Նախապես 59.000-անոց ուժ էր պահանջվում, որը հնարավոր կարիքի դեպքում կհասներ մինչև 200.000-ի[3]: Միաժամանակ արձանագրվում էր, որ Մեծ Բրիտանիան հավասարապես կարող է վարել այդ մանդատը, բայց ամերիկյան կողմը հայտարարում էր, որ բրիտանական մանդատն այնքան էլ ընդունելի չի լինի հայերի համար այն առումով, որ բրիտանական քաղաքականությունը կուլ էր գնում մահմեդական շահերին:

Վեհաժողովում և հատկապես Ազգերի լիգայի ստեղծման շրջանակներում ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի հակասությունները հանգեցնում են ԱՄՆ-ի՝ Եվրոպայում ծավալած քաղաքականությունից հրաժարվելուն: Արդյունքում՝ եվրոպացիները 1920թ հունվարին Ազգերի լիգայի բացման նիստն անց են կացնում առանց ԱՄՆ-ի: Իսկ մինչ այդ, Սևրի պայմանագրի ստորագրման համար Հայաստանի սահմանների հստակեցումը հանձնարարվում է նախագահ Վիլսոնին: Այստեղ պետք է նշել, որ ԱՄՆ-ը ձգտում էր մանդատային տարածքի մեջ ընդգրկել արևմտահայկական տարածքները, «սակայն այդպիսի Հայաստանը չուներ ամուր հիմք, և դաշնակից խորհրդաժողովը գտնում էր, որ այդ մտահղացումը չէր համապատասխանում իրականությանը և որպես հիմք պետք էր վերցնել Ռուսահայաստանը, որտեղ հաշվվում էր 400-500 հազար բնակիչ»[4]:

Հետագայում, Մեծ Հայաստանի ստեղծման բարդությունները հաշվի առնելով, Լոնդոնի կոնֆերանսը Հայկական հարցը նմանեցնում էր Հրեական հարցին: 1920թ. առաջին կեսին դաշնակիցները գալիս են այն եզրահանգման, որ հայերն ի վիճակի չեն լինելու պահպանել և նույնիսկ վերագրավել արևմտահայկական տարածքները, ուստի դրանք Հայաստանին տալը վտանգավոր է[5]:

[2] Дэвид Ллойд Джордж, Правда о мирных договорах, Москва, 1957, էջ 421:
[3] Տես Ջ.Կիրակոսյան, Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Երևան, 1972, էջ 611-612:
[4] Дэвид Ллойд Джордж, Правда о мирных договорах, Москва, 1957, էջ 421:
[5] Տես Նույն տեղում, էջ 430-431:

Դա բերելու էր նոր բախումների և տարածաշրջանում վիճակի անկայունացմանը: Արդյունքում, դաշնակիցների խորհուրդը վերջնականապես Հայաստանը թողնում է անպաշտպան: Դա վկայում էր Լլոյդ Ջորջը, ասելով, որ չի կարող պատասխանատվություն վերցնել իր վրա և համաձայնվել Մեծ Հայաստանի ստեղծմանը: Նա խորհրդակցել էր Բալֆուրի հետ, որը Փարիզում զբաղվում էր այդ հարցով, և պարզվել էր, որ Բալֆուրն ամբողջովին կիսում է իր մտքերը: Նա նաև գտնում էր, որ բրիտանական կառավարությունը կհանգեր այդ տեսակետին: Հասկանալի էր, որ լորդ Քերզոնը, որպես Լոնդոնի կոնֆերանսին մասնակից արտգործնախարարների և դեսպանների ներկայացուցիչ, մասնակիորեն սատարում էր վեհաժողովի այդ որոշումը[6]: Բացի այդ՝ նա գտնում էր, որ Մեծ Հայաստանի ստեղծումը ողջ աշխարհի մահմեդականների շրջանում ոչ ցանկալի տրամադրությունների ի հայտ գալու պատճառ կդառնա:

Փաստորեն, Սիարոնյանի պահանջները չեն արժանանում դաշնակիցների ուշադրության և Հայաստանին օժանդակելուն և միավորելուն ուղղված նպատակները վերջնականապես թաղվում են 1920թ փետրվարին Լոնդոնի, ապա 1920թ ապրիլին՝ Սան Ռեմոյի խորհրդաժողովներում: Այդուհանդերձ, դաշնակիցները հայերին պաշտպանելու նպատակով որոշում են դիմել ԱՄՆ-ին՝ որպես միջնորդի: Նախագահ Վիլսոնին հետագայում խնդրում էին կազմել Հայաստանի քարտեզը:

1920թ. օգոստոսի 10-ին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի, Հայաստանի, Բելգիայի, Հունաստանի, Լեհաստանի, Պորտուգալիայի, Ռումինիայի, Չեխոսլովակիայի լիազոր ներկայացուցիչների և Թուրքիայի միջև ստորագրվում է հաշտության պայմանագիր, որի 88-րդ կետով Թուրքիան ճանաչում էր Հայաստանի անկախությունը և համաձայնվում էր, որ ԱՄՆ նախագահի իրավական վճռով լուծվի Թուրքիայի և Հայաստանի միջև գծվելիք սահմանների խնդիրը[7]:

Հետագայում Վիլսոնի կողմից գծված Հայաստանի սահմանների մեջ էին առնվում Արևմտահայաստանի 90.000 քառ.կմ տարածքը: Փարիզի վեհաժողովի ընթացող բանակցություններում բազմիցս քննարկումների առարկա է դառնում Լեռնային Ղարաբաղի հարցը: Ավետիս Ահարոնյանի և այլոց հետ բանակցություններում բրիտանացիների ներկայացրած սահմաններում Ղարաբաղը ներառվում էր Ադրբեջանի կազմում[8]: Ղարաբաղի սահմանաբաժանմանն անդրադարձել են նաև բրիտանացիները, որոնք այն ներկայացրել են հատուկ

[6] Նույն տեղում, էջ 438:
[7] Տես Գ.Լազեան, Հայաստանը եւ հայ դատը, Երևան, 1991, էջ 214-215: A History Of The Pease Conference Of Paris, vol. VI, London, 1924, p. 83:
[8] Տես Ա.Նասիպեան, Բրիտանիա և Հայկական հարցը 1915-1923թթ., ՀԲՄ Վ. Ապտալեան մշակութային հիմնադրամ, 1994, էջ 157, քարտեզ 6 (Հայաստանի սահմանները բրիտանական պատվիրակության կողմից առաջարկված 1919թ):

հուշագրով:[9] Այդ հուշագիրը հետախուզության բաժնի ռազմածովային շտաբի փաստաթղթերից է՝ 32 թվով համարակալված և թվագրված է 1919թ. ապրիլի 23-ով: Այստեղ ներկայացված են Հայաստանի արևելյան սահմանները:

Ղարաբաղի հարցը որոշվում էր լուծել ըստ նախկին ցարական բաժանման, գտնելով, որ. Հայաստան-Ադրբեջան սահմանը թաթարների և հայերի միջև անհուսալի խառնվել է և անհնար է կազմել մոտավոր ազգագրական սահման: Երևանի և Ելիզավետպոլի ռուսական նահանգների միջև սահմանը առաջարկվող և եղած լավագույն ֆիզիկական սահմանն է, և այդպիսով կոպիտ ձևով հայ և թաթար փոքրամասնությունները հակառակ կողմերում հավասարեցվում են այդ գծով[10]: Պարզ է, որ բրիտանացիներն այս ծրագրով ձգտում էին իրենց քաղաքականության հիմքում պահել Ելիզավետպոլի նահանգի նախկին սահմանները: Այդ սահմաններով Ղարաբաղը մտցվում էր Ադրբեջանի կազմի մեջ:

Փաստաթղթում նշված է, որ ՀՀ ներկայացուցիչ Ա. Ահարոնյանը պնդում էր Ղարաբաղի հայկական պատկանելությունը՝ փաստելով գերակշիռ հայ բնակչությունը և երկրամասի հայկական տարրի անբաժան լինելը: Առաջարկվում էր անգամ Հայաստանի Հանրապետության սակավ հայաբնակ Նախիջևանի գավառը փոխարինել համարյա միատարր Ղարաբաղով:[11]

Սակայն, բրիտանացիները գտնում էին, որ դա հարցի լուծում չէր, և անթույլատրելի էր սահմանների ազգագրական և ֆիզիկական տարբերակումը:

Նախիջևանի օտարումը բերելու էր Հայաստանից Դիլմանի, Խոյի, Սալմաստի և Մակուի հայ բնակչության հաղորդակցության խզմանը:

Այնքան անհեռատեսորեն էր վճռված ազգային և վարչական բաժանումը, որ բրիտանացիները իրենք ևս գտնում էին, թե հարցը պետք է լրացուցիչ ուսումնասիրության ենթարկվի. «Քարտեզի վրա կարմիր գիծը առաջարկում է համաձայնության ստեղծում ազգագրական և ֆիզիկական տեսակետներից, սակայն առաջարկը կարիք է զգում ավելի լուրջ և լիակատար ուսումնասիրության, հավանաբար՝ տեղում»[12]: Խոսքը սահմանների լրացուցիչ ուսումնասիրումն էր էթնիկ տեսանկյունից:

Հետագայում բրիտանական կողմից մեկ այլ նախագիծ է ստեղծվում, որով Զանգեզուրը և Շուշի քաղաքը ընդգրկվում էին Հայաստանի Հանրապետության կազմի մեջ:

Հայաստանի արևելյան սահմանների այլընտրանքային նախագիծը կազմել և առաջարկել էր պրոֆեսոր Դուգլաս Զոնսոնը:[13] Վերջինս նշում էր, որ

[9] Տես Caucasian Boundaries, Documents and Maps 1802-1946, Edited by Anita L.P. Burdett, Archive Editions, London, 1996, p. 577-578:
[10] Caucasian Boundaries 1802-1946, p. 577-578:
[11] Տես Նույն տեղում:
[12] Նույն տեղում:
[13] Տես Նույն տեղում, էջ 680:

Ահարոնյանը պահանջում է այնպիսի սահմանների հաստատում, որը ներառում է Ղազախի, Ելիզավետպոլի, Զևանշիրի, Շուշու և Զանգեզուրի հայկական գյուղերը, ինչպես նաև Զեբրայիլի գավառի հայկական մասը: Ահարոնյանի ներկայացրած սահմանները Դ. Զոնսոնը համարում էր ոչ պրակտիկ՝ ռազմավարական և տնտեսական պատճառներով: Նրա կարծիքով, այս սահմանը բաժանում էր լեռները Կուրի հովտից այն դեպքում, երբ դաշտային անասնապահ թաթարները կապված էին լեռներին իրենց անասունների հոտերով, իսկ լեռնաբնակները հարթավայրերին՝ տնտեսական առումով:

Հաշվի չառնելով այն հանգամանքը, որ վերոնշյալ գավառների բնակչության գերակշիռ մասը հայեր են, պրոֆեսոր Զոնսոնը շարունակում էր արդարացնել Ղարաբաղի 255 000 հայ բնակչության բռնակցումը Ադրբեջանին՝ դրա պատճառը բացատրելով միայն տնտեսական նպատակահարմարությամբ: Մոռացության էին տրվում էթնիկ պատկանելության, մշակութային, աշխարհագրական, պատմական և քաղաքակրթական գործոնները, որոնք Ղարաբաղի հայությանը կապում էին Հայաստանի Հանրապետության հետ: Զոնսոնի սահմանաբաժանումը մանրամասնորեն ներկայացնում էր սահմանային գիծը, որը նշված էր Բրիտանական Միջազգային Քարտեզի և Ռուսական Քարտեզի կողմից: Բրիտանական եզրահանգմամբ արձանագրվում էր, որ վերոնշյալ սահմանային բաժանումն իրականացվող փոխհամաձայնություն է և իրական ռազմավարական սահման, որը հնարավորություն կտար Հայաստանի կազմում ներառել Զանգեզուրի գավառը և Շուշի քաղաքը, որոնցից յուրաքանչյուրն էլ պարունակում է մեծաթիվ հայկական բնակչություն:

Սահմանը Հայաստանի կազմում ընդգրկում էր ողջ Զանգեզուրի գավառը, ներառյալ և հայերի կողմից պահանջված մասը, ավելի ցածր գտնվող Հաքարլու - Բարգուշա գետային ցանցը: Այդ ավազանի ավելի ցածր հատվածն անվիճելի է իր թաթարական բնույթով, սակայն, անհնար է այն բաժանել վերին մասից, որը Հայաստանինն է, ուստի անհրաժեշտ է այն ամբողջովին առնել Հայաստանի մեջ: Սահմանագիծը Հայաստանի կազմում է ներառում նաև Շուշու գավառի փոքր մասը, անտարակույս քաղաքի հետ [14]:

Մյուս կողմից, նշված գիծը Հայաստանից դուրս է թողնում Շուշու գավառի մեծ մասը, Ղազախի, Ելիզավետպոլի, Զևանշիրի գավառները և հայերով բնակեցված մասը Զեբրայիլի գավառում:

Զոնսոնը վկայում էր որ անհնար է գտնել համարժեք այլ սահման, որը կներառեր Շուշու, Ղազախի, Ելիզավետպոլի, Զևանժիրի գավառներում բնակվող հայերին:

Այսպիսով, ըստ Զոնսոնի նախագծի, Ղարաբաղի լեռնային գավառների մեծ մասը տրվում էր Ադրբեջանին, սակայն, ի տարբերություն նախորդի, այն

[14] Caucasian Boundaries 1802-1946, p. 680:

Հայաստանին էր թողնում Զանգեզուրը և Շուշի քաղաքն իր հարակից մի շարք տարածքներով:

Փաստորեն, Ղարաբաղի հայ ազգաբնակչության մեծ մասը բռնի պետք է ենթարկեցվեր Ադրբեջանին: Այն ոչ մի տեսակետից իրատեսական չէր, քանզի հաշվի չէր առնում տեղի ազգաբնակչության գերակշիռ մասի կարծիքը:

Ղարաբաղի նկատմամբ բրիտանացիների որդեգրած նման քաղաքականությունը բնական է, առաջ էր բերել Հայաստանի Հանրապետության Արտաքին Գործերի Նախարար Ա. Տիգրանյանի լուրջ մտահոգությունները, որը նշում էր, թե Ղարաբաղի և նրա հարակից խնդիրներում գեներալ Թոմսոնը ու իր գործակիցները և հաջորդները գործել են ոչ իրենց գլխու, այլ արտաքին գործերի զորական Նախարարության գիտությամբ և համաձայնությամբ: Թոմսոնի և մյուս գեներալների /անգամ մեզ մոտ հայասեր համարվող Բիչի/ զեկուցումները մասնավորապես Ղարաբաղի և առհասարակ մեզ վերաբերվող խնդիրներում, եղել են վնաս մեզ և այլն:[15]

Ղարաբաղի նկատմամբ բրիտանական քաղաքականության վերաբերյալ բողոք ուղարկվեց Ու. Չերչիլին, որը, սակայն, հրաժարվեց ընդունել այն իրողությունը, թե «բրիտանացիները Ղարաբաղը Ադրբեջանին հնազանդեցնելու քաղաքականություն են վարում»:[16]

Իհարկե, Հայաստանի Հանրապետության արտգործնախարար Ա. Տիգրանյանի դժգոհությունը բրիտանական քաղաքականության վերաբերյալ ուներ իր օբյեկտիվ պատճառները, քանզի հսկայական էին նույնիսկ այն սխալները, որոնք չէին ժխտում անգամ իրենք՝ բրիտանացիները: 1920թ. մարտի 3-ին "Times"-ի համարում Ու. Չերչիլը կառավարության նկատմամբ դժգոհություն է արտահայտում. «Գեներալ Սիլը դժգոհում է, որ նրանք /կառավարությունը/ հաշվի չեն առել մի քանի հազար հայերի կյանքի ապահովումը: Հայերի խնդրի դժվարությունը նրանում է, որ թուրքական և հայկական բնակչությունը բավական մեծ տարածքներում խառն է»[17]:

Բրիտանական քաղաքականությունն այլևս ի վիճակի չէր միջամտելու շարունակվող գործընթացներին, ուստի բոլշևիկյան ուժեղացող ճնշումն իր հունի մեջ էր առնելու նաև Հայաստանը, որի մասին իր կառավարությանը տեղեկացնում էր Անդրկովկասում բրիտանական ներկայացուցիչ Կոմանդոր Լյուկը:[18] Նա վկայում էր, որ Լեգրանը հայտարարել է, թե Ղարաբաղն ու Զանգեզուրը հայկական տարածքներ են:

Իսկ այդ պարագայում, երբ խորհրդայնացել էր Ադրբեջանը և խորհրդայնացումը տարածվում էր Ղարաբաղում և այլ տարածքներում,

[15] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 62, թթ. 1-2:
[16] Տես նույն տեղում:
[17] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, մաս 1, թ. 104:
[18] Տես Armenia, Political and Ethnic Boundaries 1878-1948, London, p. 816:

Հայաստանի Հանրապետությանը ոչինչ չէր մնում անել, քան համաձայնել Խորհրդային Ռուսաստանի հետ: 1920թ. օգոստոսի 10-ի Բ. Լեգրանի, Ա. Զամալյանի և Ա. Բաբալյանի մասնակցությամբ ստորագրված խաղաղության մասին պայմանագիրը պարունակում էր 6 կետ: Համաձայն 2-րդ կետի, վիճելի համարվող «Զանգեզուրը, Նախիջևանը և Ղարաբաղը զբաղեցվում էին խորհրդային զորքերով, մինչև նոր խաղաղության համաձայնագրի ստորագրումը մոտ ապագայում»[19]: Պայմանագրի 6-րդ կետով թույլ էր տրվում Հայաստանի տարածքով խորհրդային զորքերի ազատ տեղաշարժը, մի հանգամանք, որին առանձնահատուկ նշանակություն էին տալիս խորհրդային ղեկավարությունը: Նպատակը Թուրքիայի հետ անմիջական կապի ստեղծումն էր, որով պետք է ապահովվեր "համաշխարհային հեղափոխության" տարածումն Արևելքում:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունը Ղարաբաղը ճանաչում էր Խորհրդային ազդեցության գոտի, որն էլ առաջացնում է բրիտանացիների դժգոհությունը: Այս մասին Հայաստանի Հանրապետության կառավարությանը բողոք է հայտնում կոմանդոր Լյուկին փոխարինած գնդապետ Ստոքսը: Հոկտեմբերի 3-ին Երևան ժամանելուց հետո նա արդարանում էր, թե «Անգլիան այժմ անզոր է ռեալ օգնություն հասցնել Հայաստանին, ռմբակոծել կամ վերցնել Տրապիզոնը միտք չունի, որովհետև Անգլիան չի կարող մեծ ուժ հանել տաճկական ափը՝ երկրի խորքերը գնալու, իսկ միայն քաղաքը և նավահանգիստը գրավելը մեծ օգնություն չի տա Հայաստանին»:[20] Ստոքսը օգոստոսի 10-ի համաձայնագիրը համարում է անհեռատես քաղաքականություն: Նա, փաստորեն, խորհուրդ էր տալիս հույսը դնել միայն սեփական ուժերի վրա և հրաժարվել օգնություն ստանալու գաղափարից:

Վերոնշյալ քաղաքական իրադարձությունների կապակցությամբ իր բողոքն է հայտնում Անգլիայի "Բանվորական Կուսակցությունը":[21] Այնտեղ նշվում է, որ Ռուսաստանը չի կարող թույլ տալ Թուրքիայի կողմից Հայաստանի տարածքների նվաճումը, քանզի դա անարդարացի է:

Սակայն սա ընդամենը բողոք էր և իրատեսական ազդեցություն չէր կարող ունենալ:

Իսկ, իրականությունն այն էր, որ շարունակում էր գործել թուրք-թաթարական հայասպան մեքենան, այս անգամ արդեն քեմալաբոլշևիկյան քողի տակ: Հայ ժողովուրդը հայտնվել էր օրհասական նոր վիճակի առջև:

Այսպիսով, բրիտանական զորքերի դուրսբերումն Անդրկովկասից Լեռնային Ղարաբաղը լիովին թողնում էր անպաշտպան՝ թուրք-թաթարական

[19] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ.581, թ. 262:
[20] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 94, թթ. 1-2:
[21] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ.427, մաս 1, թ. 103:

ջարդարարների դեմ, իսկ ադրբեջանական բանակը և մահմեդական խաժամուժը նախաձեռնում էին Ղարաբաղ-Զանգեզուրի բռնազավթումը: Չնայած, որ Հայաստանի Հանրապետությունը քայլեր է ձեռնարկում Ղարաբաղ-Զանգեզուրի ,պաշտպանության ուղղությամբ, սակայն իրականացվում էին Շուշու հայության և Ղարաբաղի մյուս հատվածների հայ բնակչության կոտորածները: Պետք է նշել, որ Ղարաբաղի պաշտպանունակության ամրապնդման աշխատանքները զուր անցան, քանզի խորհրդա-քեմալական համագործակցությունը բերում էր Ղարաբաղի խորհրդայնացմանը: Բրիտանական դիրքորշումները Փարիզի վեհաժողովում Ղարաբաղի սահմանների և պատկանելիության շուրջ հարցը թողնում էին անվճռելի: Վեհաժողովի ավարտի հետ Ղարաբաղի հարցի որոշումը առկախ էր մնում:

Ղարաբաղի խորհրդայնացմամբ երկրամասի պատմության համար բացվում է մաքառումների և պայքարի մեկ այլ ժամանակաշրջան՝ լի հերոսացումով, նվիրումով, հայրենասիրությամբ:

1920 թ. օգոստոսի 10-ին ստորագրված Սևրի պայմանագիրը Անդրկովկասի երեք հանրապետությունների սահմանների հարցի վճիռը թողնում էր իրենց՝ այդ պետությունների փոխադարձ համաձայնությանը: Իսկ դա նշանակում էր, որ վիճարկվող գավառների շուրջ պայքարը պետք է շարունակվեր:

Պատահական չէր, որ խաղաղության վեհաժողովը հանգեց այդպիսի որոշման, քանզի հենց այդ ժամանակ Անդրկովկասում իր կամքն էր սկսում թելադրել Խորհրդային Ռուսաստանը:

Ծանոթագրություններ

1. Զ.Կիրակոսյան, Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Երևան, 1972,
2. Գ.Լազեան, Հայաստանը եւ հայ դատը, Երևան, 1991
3. Ա.Նասիպեան, Բրիտանիա և Հայկական հարցը 1915-1923թթ. ՀԲԸՄ Վ. Ապտալեան մշակութային հիմնադրամ, 1994
4. թ.թ.Махмурян, Лига наций, Армянский вопрос и Республика Армения, Е., 1999,
5. Дэвид Ллойд Джордж, Правда о мирных договорах, Москва, 1957
6. Caucasian Boundaries, Documents and Maps 1802-1946, Edited by Anita L.P. Burdett, Archive Editions, London, 1996
7. Armenia, Political and Ethnic Boundaries 1878-1948, London
8. A History Of The Pease Conference Of Paris, edited by H.W.V.Temperley, vol. VI, London, 1924
9 .ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 62,
10. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, մաս 1,
11. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ.581,
12. ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 94,